ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

24.03.2023թ. N 88-Ա

Ինկորպորացիա առ 26.09.2025թ. N 223-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ՀԱԿԱԿՈՌՈՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 7-րդ կետը և ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46.1-ին հոդվածով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում (այսուհետ՝ Կոմիտե) հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու նշանակել Կոմիտեի իրավաբանական վարչության պետ Գրիգոր Ամիրյանին: (փոփ. 26.09.2025. N 223-Ա)

2. Կոմիտեում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի փոխարինող նշանակել Կոմիտեի իրավաբանական վարչության պետի տեղակալ Հասմիկ Լևոնյանին:

3. Կոմիտեի գլխավոր քարտուղարին՝

ապահովել Կոմիտեում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի և նրան փոխարինող անձի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը Կոմիտեի պաշտոնական կայքում:

4. Սույն հրամանն ուղարկել Կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, մամուլի քարտուղարին, Կոմիտեի գլխավոր քարտուղարին, սույն հրամանով սահմանված Կոմիտեում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուին և նրա փոխարինողին, Կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց:

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ